

5.3. Առողջապահություն

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության ամփոփ տվյալների, հանրապետությունում 2000թ. գրանցվել են հետևյալ տարափոխիկ հիվանդությունները.

(100 հազ. բնակչի և 0-14 տարեկան երեխաների հաշվով)

Հիվանդությունների անվանումը	Ընդամենը		2000թ. աճը կամ նվազումը տոկոսով 1999թ. համեմատ (նվազումը «-» նշանով)	Մինչև 14 տարեկան երեխաների մոտ		2000թ. աճը կամ նվազումը տոկոսով 1999թ. համեմատ (նվազումը «-» նշանով)
	1999թ.	2000թ.		1999թ.	2000թ.	
Որովայնային տիֆ	1.1	0.4	- 63.6	2.3	0.9	- 60.9
Սալմոնելոզային ինֆեկցիաներ	8.2	6.3	- 23.2	25.4	21.4	- 15.7
Սուր աղիքային հիվանդություններ այդ թվում՝ բակտերիալ դիզենտերիա	270.5	99.9	63.1	566.9	285.2	- 49.7
Էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոքսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով	36.6	20.8	- 43.2	81.4	52.7	- 35.3
սուր աղիքային ինֆեկցիաներ՝ չհաստատված և չճշգրտված հարուցիչներով սննդային տոքսիկոինֆեկցիաներ	25.2	19.2	- 23.8	75.8	65.7	- 13.3
Սուր աղիքային ինֆեկցիաներ՝ չհաստատված և չճշգրտված հարուցիչներով սննդային տոքսիկոինֆեկցիաներ	208.0	59.5	- 71.4	408.3	166.2	- 59.3
Շնչօրգանների տուբերկուլյոզ	21.3	19.5	- 8.5	3.8	2.9	- 23.7
Բրուցելյոզ առաջնակի ախտորոշված	2.7	3.0	11.1	2.5	2.1	- 16.0
Վիրուսային հեպատիտ այդ թվում՝ հեպատիտ Ա	74.6	46.6	- 37.5	214.0	122.9	- 42.6
հեպատիտ Բ	68.3	43.2	- 36.7	204.1	119.3	- 41.5
Պարոտիտ համաճարակային	6.2	3.3	- 46.8	9.8	3.6	- 63.3
Մալարիա առաջնակի ախտորոշված	307.6	92.7	- 69.9	1080.8	326.9	- 69.8
Մալարիա առաջնակի ախտորոշված	16.6	3.8	- 77.1	8.4	1.9	- 77.4
Սիֆիլիս	5.1	5.4	5.9	0.5	0.6	20.0
Սուր և քրոնիկական սուսանակ (հոնորեա)	7.8	10.6	35.9	0.8	0.2	- 75.0
Ոջլոտություն /պեդիկուլյոզ/	2370.3	1880.4	- 20.7	8621.0	6823.0	- 20.9
Վերին շնչուղիների սուր ինֆեկցիաներ	5514.7	4578.0	- 17.0	10869.6	10378.5	- 4.5
Գրիպ	2878.7	1089.0	- 62.2	4323.2	1956.4	- 54.7
Քոս	63.5	28.5	- 55.1	124.5	68.3	- 45.1

2000թ. հանրապետությունում տարափոխիկ հիվանդությունների բռնկման դեպքեր չեն գրանցվել: Ընդհանուր առմամբ, 1999թ. համեմատ արձանագրվել է տարափոխիկ հիվանդությունների նվազում: Մասնավորապես, ընդհանուր աղիքային հիվանդությունների դեպքերը նվազել են 1173-ով, բակտերիալ դիզենտերիայի՝ 305–ով, չհաստատված հարուցիչներով սուր աղիքային ինֆեկցիաների՝ 5495–ով և վիրուսային հեպատիտների դեպքերը՝ 1038-ով: 1999թ. համեմատ արձանագրվել է էպիդեմիկ պարոտիտով և մալարիայով հիվանդացության դեպքերի կտրուկ նվազում, համապատասխանաբար՝ 7949 և 475: Մալարիայով հիվանդացության դեպքերի նվազում արձանագրվել է Արարատյան դաշտավայրի մի շարք բնակավայրերում: Այսպես, Արտաշատ, Վեդի և Էջմիածին քաղաքներում և դրանց հարակից բնակավայրերում այն նվազել է համապատասխանաբար՝ 36, 53 և 35 դեպքերով: Շնչառական օրգանների տուբերկուլյոզով հիվանդացության դեպքերը նվազել են 64-ով:

Միաժամանակ, հանրապետությունում արձանագրվել է մի շարք այլ տարափոխիկ հիվանդությունների աճ: Այսպես, բրուցելյոզով հիվանդացության դեպքերն աճել են 9-ով, մենինգոկոկային /ուղեղի բորբոքում/ համաճարակինը՝ 3-ով, հարկապույտ հազինը՝ 8-ով, սիֆիլիսինը՝ 10-ով և այլն: Արձանագրվել է նաև փայտացման 1 դեպք:

2000թ. պոլիոմիելիտի և դիֆթերիայի դեպքեր չեն արձանագրվել: